

եւ այս երկրորդ շինութեան ատեն Սուրբ Լուսաւորիչ՝ նախնական անունը՝ կը պահուի:

Ահա՛ այս երկրորդ վերաշինութիւնն է որ Երուսաղէմի Եսայի Գ.ի պատրիարքութեան հանդիպած է. հետեւաբար Եսայիներու շինութիւնը կրնար յառաջ դալ պարզապէս երեք անուններուն զուգագէշ նոյնութենէն: Եւ կամ թէ արձանագրողը՝ Եսայի Ա.ով կը հասկնայ Եսայի Բ.ը եւ հասկնել կուզէ 1391ի շինութիւնը, առանց անդրադառնալու թէ 1436ին ալ Եսայի մը կայ:

Իսկ արձանագրութիւնը, Վոլոտի ատեն, եւ հաւանաբար նոյն իսկ Վոլոտի գրչէն ելած է 1733 ին, Ս. Լուսաւորչի երբորդ վերաշինութեան առթիւ:

Մեր յիշատակարանի համեմատ Ս. Խաչն ալ Ս. Լուսաւորչին հետ նոյն հնութիւնն ունի: Գարբին Աւետի շինածը պարզ փոքր մ'է եղած:

Ս. Խաչ մատուռը՝ ետքը Եկեղեցւոյ վերածուած է, Ս. Լուսաւորչի հետ նոյն մեծութեամբ: Ս. Խաչ Ս. Լուսաւորչին կցուած է հիւսիսային կողմէն: Հարաւային կողմէն ալ կցուած է Ս. Վարդեօր Եկեղեցին, որուն մասին հնագոյն յիշատակարանի մը հանդիպեցայ: Վոլոտի վերաշինութեան ատեն, երեք Եկեղեցիները միանգամայն կը յիշուին: Մեծ հրդեհէն (1731) ետքը միջին տաճարը կը շինուի՝ «աղիւսակերտ եւ կապարածածը եւ միւս երկուքն, որ յաջմէ եւ յահեկէ, փայտակերտ եւ տախտակամած»:

Արդի Ս. Լուսաւորչիը կը բաղկանայ մէկի վերածուած վեց սրբավայրերէ:

Ա. Ս. Լուսաւորիչ ճիշդ մէջտեղ.

Բ. Ս. Խաչ հիւսիսային կողմէն.

Գ. Ս. Կարապետ հարաւային կողմէն.